

5

Աւուրք աւուրց և ժամք ժամուց յաշորդեն ,
Ես ի խորհուրդս իմ տատանեալ տարուբեր՝
Ձրսպառնայեաց խընդրել խնդրեմ զօրհասին
Ի վազ նոցին զրոշեալ ժամ բօթաբեր :

6

Այլ ուր արդեօք ինձ ժանտ նըսի՜ տացես , մահ ,
Յահէղ մարտի , յերկիր օտար , թէ ի ծով .
Հովանաւորս արդեօք հովիտ մերձակայ՝
Զաճիւն իմ ցուրտ ամփոփեացէ ընդ հողով :

7

Թէպէտ չէ փոյթ անըզգայեալն մարմնոյ
Ըզտեղւոյն ուր և փրտտեալ լուծանի ,
Այլ քաղցր էր ինձ առնուլ զհանգիստ մահաքնոյ
Ի վայր ծանօթ՝ և ի սահման հայրենի :

8

Եւ առ չիրմաւս մատաղերամ մանկութիւն՝
Թող զի խայտայր ման ի մանի պարաւոր ,
Եւ անըզգայ ընդ իմրս բաղդ՝ բընութիւն
Թող զի պըճնէր Գեղազըւարճ մըշտանոր :

ՎԷՌՆԷՐ ՄՈՒՆՑԻՆԿԷՐ

Անցեալ տարւոյն վերջերն հեռա-
գիրն իմաց տուաւ թէ եգիպտական
բանակն ու Եթովպացիք ճակատելով իւ-
րաքանչիւրն իր երկրին սահմանագլխին
վրայ մէկմէկու զարնուեր են , և եգիպ-
տական զօրավարն Մունցինկէր փաշայն
սպաննուեր է իր վրանին մէջ հանդերձ
կնաւն ու քանի մը ծառաներովս : Ետ-
քէն առնուած տեղեկութիւնները ման-
րամասնաբար պատմեցին այս ցաւալի
անցքն , որ եգիպտոսի այն կողմերն ու-
նեցած ազդեցութեանը մեծ հարուած
մը եղաւ , ուստի նորէն զլուխ վերցու-

նելու համար բաւական ժամանակ և
ջանք 'ի դօրծ դրուեցան , մինչև որ ե-
գիպտական զինուց պատիւը տեղն ե-
կաւ , և շատերուն ալ մտադրութեան
նիւթ եղան այն հեռաւոր կողմանց մէջ
կատարուած այս արկածները :

Բայց ամենէն աւելի գիտնականաց
սիրտը շարժեցաւ Մունցինկէր փաշային
տարաբաղդ մահուանը վրայ , որոնք յա-
տոնցուրէն 'ի վեր իրենցմէ մէկը կը հա-
մարէին զինքը , և անոր պարտական
էին շատ մը նորագոյն տեղեկութիւն
ներ Ափրիկէի այն մասանցը վրայ :

Վասն զի Մունցինկէր փաշայն այն սակաւաթիւ իմաստնոց և քաջայան, դուզն գիտուններէն մէկն էր, որոնք կեանքերնին վտանգի մէջ դրած՝ Եւրոպայէն կը դիմեն ՚ի զիւս կամ ՚ի լուսաբանութիւն անծանօթ երկիրներու և իրաւցունէ Մունցինկէր փաշայն աստնոց մէջ եղականներէն մէկն էր թէ՛ յանդըգնութեամբն, որով միայնակ առաջին քայլափոխն առեր էր այնպիսի ճամբու մը մէջ, որ իրօք անհարթ և դժուարագնալի էր, և թէ արգասեօքն՝ որ դիտցած էր ձեռք բերել : Իր մահը պարապ մը թողուց իմաստնոց կաճառոյն մէջ, Ափրիկէն լուսաբանողաց կամ քննողաց դասուն մէջ, և ժամանակն երկար պիտի աշխատի այս պարապը լեցունելու :

Մունցինկէր փաշայն ծնած էր Զուիցերիոյ Սոլթօր կամ Սոլեդա նահանգին Օլդէն քաղաքն, յամին 1832 ապրիլի 21. Հայրն այն նահանգին Լաւդամաւն կամ նահանգապետն էր, ետքէն դաշնակցական խորհրդական եղաւ ՚ի Պեռնա, և Զուիցերիոյ երևելի անձանց մէկն էր՝ Հայրենեացը մատուցած ծառայութեանցը համար, որուն յիշատակը մինչև հիմա կը պահուի և օրհնեալ է դաշնակցութեան մէջ : Մանուկն Մունցինկէր նախ Սոլեդա առաւ իր սկզբնական ուսումը, և յամին 1849 անցաւ քնտանեօք ՚ի Պեռնա, ուր աշակերտեցաւ համալսարանին : Մտաւարժ էր և ընդունակ, ու երիցագոյն եղբօրն հետ, որ վերջէն դասատու եղաւ իրաւագիտութեան, ինչուան նոյն ժամանակը ուսմանց մէջ միշտ առաջին մրցանակներն առեր էին : Բայց պատանին Մունցինկէր դեռ ևս չէր գուշակած իր յատուկ կոչումը. կուղէր աստուածաբանութիւն սովորիլ, միանգամայն ալ դէպ ՚ի գեղեցիկ դպրութիւն ձկտումն կը զգար : Վերջապէս որոշեց բանասիրութեան տալ ինքը զինքը, որով գտաւ իր ճամբան : Անցաւ Միւնխիք յամին 1850, ուր մշակեց արեւելեան լեզուները Նայման և Միլլէր գասատուաց առաջնորդութեամբը. երկրորդ

տարին անցաւ Բարիք. հօն ալ շարունակեց նոյն ուսումը Ռէնոյ, Մոլ և Հապ արեւելագիտաց առաջնորդութեամբը :

Բայց դրաւոր ուսումը բաւական չէր համարեր կատարելագործելու զինքն այն դժուարին լեզուաց գիտութեանը մէջ : Անոր համար յամին 1852 անցաւ Եգիպտոս ու դնաց Գահիրէ, դործնականապէս վարժելու ձեռնարկած լեզուագիտութեանը մէջ. բայց՝ որովհետեւ դրամի ալ կարօտութիւն ունէր, դարձաւ Աղեքսանդրիա, ուր վաճառականի մը քով մտաւ : Մտածութիւնը բարի էր, վասն զի քանի մը ամիս ետքը զրկուեցաւ իբր երկրորդ առաջնորդ վաճառականական արշաւանքի մը դէպ ՚ի Կարմիր ծով, և ափրիկեան կողմանց խորհրդաւոր աշխարհը, որ իր կենաց երազն եղեր էր, իր առջևը բացուելու վրայ էր :

Ամբողջ տարի մը Մասովա կեցաւ, որ եթովպական նաւահանգիստ է Կարմիր ծովուն վրայ, և անկէ կրցաւ մշտնել եթովպական բարձրատափին հիւսիսային կողմերը, որոնք մինչև այն ժամանակն անծանօթ էին : Տեղեաց ու մարդոց նորութիւնն զրաւեց զինքը, և մտածեց որ մանրակրկիտ քննութիւն մը այն կէս անծանօթ երկիրներուն վրայ, բաւական վարձք կրնայ տալ իր աշխատութեանը : Ուստի յարմարցուց Պօկոյ ըսուած ժողովրդոց հետ, մտաւ անոնց մայրաքաղաքը Գէրէն, և հետեւին բարեկամական վերաբերութիւններ հաստատեց : Այն երկար բնակութեան ժամանակն, որ անոնց քով անցուց, և տեւեց մինչև 1861, արշաւեց վաճառականական նպատակաւ ինչուան ֆասսալա, մանաւանդ նաւարկեց Կարմիր ծովուն ափանցը վրայ և դնաց մինչև ձեռտա, որ Մէքքէի նաւահանգիստն է :

Վաճառականական զբաղմունքն իրեն համար պատճառաւոր էին, կամ լաւ ևս միջոց մ'էին իր սիրելի ուսմանցն հետամուտ ըլլալու : Եւ մինչդեռ մէկ կողմանէ կը հայթայթէր իր ապրուստը, միւս կողմանէ ազատ ժամերն ալ կը

գործածէր այն երկիրները ճանչնալու, սովորութիւններն, օրէնքներն մանաւանդ լեզուներն քննելու: Արդէն Աղեքսանդրիայէն զրկեր էր վաճառականական նամականեր առ լրագիրն Դրեկտի, որոնք մասնաւոր մտադրութեան առնուած էին. այն ատեն սկսաւ գրել աւելի ընդարձակօրէն շատ մը նամակաւոր եւրոպայի Եւրոպայէն վրայ, զորոնք տպագրեց Պետլինու գերմաներէն Օրագիրն ընդհանուր Ալխարհագրութեան, և ուսումնական տեղեկագրութիւններ, զորոնք Մալդ-Պրէսն ալխարհագիրն հրատարակեց գաղղիերէն Նոր Տարեգիրք ճաւապարհորդութեան ցրտած օրագրին մէջ. բայց Մունցինկէրի կատարեալ դործն, որ իր համբաւն հռչակեց, գերմաներէն գրուածքն եղաւ Պոկոնկերուն սովորութեան և օրինադրութեանցն վրայ, զոր հրատարակեց յամին 1859 թի Սոլեղդա, ալխարհացոյց գեղեցիկ տախտակներով, զորոնք ինքը գծագրեր էր:

Այս հրատարակութեամբ Մունցինկէր մեծ պատիւ ստացաւ գիտնոց առջեւ, և հրաւէրը ընդունեցաւ ընկերանալ գերմանական արշաւանացն, որ յամին 1861 ճամբայ ելան ի խնդիր Ֆոկլը եղուարդոյ՝ ափրիկեան ճանապարհորդին: Մունցինկէր ընկերեց այն արշաւանաց մինչև Մասովայի նաւահանգիստը. և մինչդեռ անոնց մէկ մասը հարաւ կ'երթար դէպ ի եթովպական բարձրատափը, ինքը ֆինկէլպախ անունով գիտնականին հետ գնաց դէպ ի Բասսալա, Պարգայից ու Բուսանդայից անկոխ երկիրները, և անկէ անցնելով Խարթում մինչև գետախառնունքն Սպիտակ Նեղոսի ու կապուտակ Նեղոսի, հասաւ դէպ ի Էթովպիդ փորտոֆանի մէջ:

Այն արշաւանաց գիտնականքն յամին 1863 վերադարձան Եւրոպա, ուր կաւառք իմաստնոց մեծ խնամքով ընդունեցան անոնց յանդուգն ճանապարհորդութեան տեղեկութիւնքն, որոնք հրատարակեցան Բէգդէումանի գերմաներէն Ալխարհագրական անունների Օ-

րագրին մէջ (Mittheilungen). Մունցինկէր իր կողմանէ աւելցուց Բառարան մը Դիկրէի լեզուին, և ի վեր քան զամենայն Ափրիկէի քննութեանց վրայ գիրք մը հրատարակեց, որ շատ նշանաւոր դրուածք համարուեցաւ. վասն զի կը բովանդակէ, կը ճշդէ և կը լրացունէ ինչ որ մինչև հիմա կը գիտցուէր եթովպիոյ և չրվակայ երկիրներուն վրայ:

Բայց այս երկու գրուածոց հրատարակումէն առաջ ինքն արդէն վերադարձեր էր Ափրիկէ, և յամին 1863 հոկտեմբերի մէջ նորէն Մասովա կը գտնուէր, ուր կալուածներ ունէր և երկրորդ տարին հօն ամուսնացաւ: Անգղիոյ կառավարութիւնն յաջորդ տարին զինքն հրապարտաւ անունեց Մասովա, յի մէջ, ուր արդէն Գազդիոյ փոխահրապարտութեան պաշտօն կը վարէր: Մունցինկէր որ կատարեալ ծանօթութիւն ունէր եթովպիոյ վրայ, մեծամեծ ծառայութիւններ մատոյց Անգղիացուց երբ պատերազմ բացին թէոդորոս թագաւորին դէմ, և ոչ սակաւ ձեռնառու եղաւ անոնց զինուց յաջորդութեանը:

Վասն զի անգղիական կառավարութիւնը զինքն ու անգղիացի հազարապետ մը (Colonnel Merewether) նշանակեց, որ այն կողմերուն քննութիւններ ընեն, որոնք ներկայացուեցան անգղիական բաւլամենդին յամին 1867, և գուցէ պատճառ եղան պատերազմին որ երկրորդ տարին բացուեցաւ:

Հօս Մունցինկէրի կենացը մէջ մութ չըլան մը կայ. կ'երեւայ թէ սաստիկ եւ ուսնդեամբ Անգղիացուց կողմը բռնած ըլլայ, և իր պաշտօնական կրկնակի կերպարանքը ձեռնառու եղած ըլլայ ուրիշ ազգաց ֆուտուն: Վասն զի Պոկոնկերուն հետ ունեցած վերաբերութիւններովը, որոնք մէջ նոյն իսկ իր կինն ընտրեր էր, կարող եղաւ հարթել ճամբան Անգղիացուց առջեւ, և Պոկոնկերուն այս բանս չմոռցան, և դարձան որ լարեցին իրեն կենացը դէմ, ուր բռնական մահուամբ զրաւեցաւ այն ծաղիկ հասակին մէջ, աւելի անձնական վրէժխնդրութիւն

մէր, քան թէ պատերազմական հր-
նարք:

Որպէս և է, երբ Սնդդիացիք յամին
1868 ցամաք ելան 'ի Մասսպիա Մունցին,
կէրի տուած տեղեկութիւններովը կրցան
մտնել Եթովպիա, ու մեծ խնայութեամբ
ժամանակի, դրամաց և կենաց 'ի կա-
տար հանել այն պատերազմն, որ վեր-
ջացաւ թէոդորոս թագաւորին անկ-
մամբ ու մահուամբը: Բայց Մունցիներ
նիւթական մեծ օգուտ մը չքաղեց այս
իր ըրած ծառայութիւններովը: Վասն
զի Անգղիա բաւական սեպեց տալ իրեն
չքանչան մը, միանգամայն վերցունե-
լով վրայէն Մասովայի հիւպատոսու-
թիւնը, և կտրելով անոր յարակից հա-
սոյթը:

Ընդ հակառակն մնացին թշնամի-
ները, զորոնք իրեն դէմ հաներ էր Անգ-
ղիացւոց օգնելովն, և քիչ մնաց որ յա-
մին 1869 զինքը սպաննէին դարանով
մը, որ իրեն դէմ լարեք էին, ուսկից
ծանր վէրքով մ'ազատեցաւ, բայց ինքն
ամենևին չվճատեցաւ, և երկրորդ տա-
րին անգղիացի նաւապետի մը հետ Ա-
րաբիոյ բոլոր հորաւային ծովափունքը
պտըտեցան և քննութիւններ ըրին,
զորոնք հրատարակեցին 'ի Լոնտրայա-
մին 1871. Իսկ Մունցիները դարձաւ
նորէն Եթովպիա յամին 1872, և քնն-
նեց այն երկրին հիւսիսային մասունքը,
և հրատարակեց իր քննութիւնքը վե-
րոյնիւս գերմաններէն աշխարհագրա-
կան Օրագրին մէջ:

Մունցիներին այս արիասիրտ բնա-
ւորութիւնը, այն տեղեաց վրայ ունե-
ցած կատարեալ ծանօթութիւնքը տես-
նելով Եգիպտոսի փոխարքայն, որ տա-
րինեմէ 'ի վեր կը բաղձար այն երկր-
ներուն աշխարհակալութեանը, յամին
1872 անուանեց զինքը սպարապետ
եգիպտական բանակին որ Եթովպիա
պիտի արշաւէր և կառավարիչ Մասո-
վայի, որ եգիպտական իշխանութեան
ձեռքն անցեր էր, հանդերձ հիւսիսային
ափամբը Կարմիր ծովուն, առ որ մաս-
նաւոր թոյլ տուեր էր Բարձրագոյն Դու-
ռը 1865 տարուընէ 'ի վեր. քիչ մը ետ-

քը Սուաքինի գաւառն ալ յանձնուե-
ցաւ եգիպտական վարչութեան: Այս-
պէս Պեռնայի և Բարիզու համալսարա-
նական ուսանողն փոխուեցաւ ու եղաւ
եգիպտական պաշտօնեայ, նախ Մուն-
ցիներէ Պէյ, ետքէն Մունցիներէ փաշա
անուանուեցաւ, հանդերձ այս բարձր
աստիճանին պատիւներովն ու ռոճկօքը:

Բաւական օգուտ ըրաւ կամ ուզեց
ընել այն կողմերուն իր աշխատութեամ-
բը: Յառաջ քան զամենայն, եւրոպացի
ըլլալովն, ջանաց զարգացունել իրեն
յանձնուած երկրին անտեսական պայ-
մանները. կապեց Մասովան, որ այն
ծովափանց նաւահանգիստն է, թում-
բով մը՝ ցամաքին հետ. քաղաքը ջուր
բերել տուաւ, հաղորդակցութեան ճամ-
բաներ բացաւ, մինչև անդամ հեռա-
գրութիւնը պարզեց իր թեւերը ինչուան
Քասսալա ու Սուաքին, կտրելով անց-
նելով Մենայի ու Պոկոններուն լեռնոտ
երկիրները, ուղղակի հաղորդակցու-
թիւն կապեց մէկ կողմանէ Եւրոպայի
հետ ու միւս կողմանէ Հնդկաստանի
հետ: Բայց 'ի ասոնցմէ, Մունցիներէ
փաշան իրեն յանձնուած աշխարհքին
մէջ ամեն կարելի միջոցներով զարգա-
ցուց ու խրախուսեց վաճառականու-
թիւնն ու երկրագործութիւնը, նոր մը-
շակութիւններ մտուց, երկրագործա-
կան մեքենաներ բերել տուաւ Պոկո-
ններուն երկրին մէջ, ուսումնարաններու
դպրոցներ կանգնեց, ուր քրիստոնեայ,
հրէայ ու մահմետական մանկունք կըր-
թութիւն կ'առնուին:

Բայց Մունցիներէ պիտի չտեսներ իր
ձեռնարկած գործոյն զուրկ ելլելը: Ե-
թովպացւոց ու Եգիպտացւոց շարու-
նակ շփմունքը սահմանադիւին վրայ,
երկրին ապահովութիւնը կը վտանդէ-
ին. վերջապէս եգիպտական կառավա-
րութիւնը ուզեց վախճան տալ այս ան-
պատեհութեանց և որոշեց արշաւել
յեթովպիա: Ուստի զօրաց մէկ մասը
շուետացի Սվենտորուպ (A. V. Svendrup) ա-
նունով հաղարապետին յանձնուեցաւ,
որ հիւսիսէն մտաւ Եթովպական բար-
ձրատափը. Մունցիներէ փաշան ալ

350 զինուոր ու երկու թնդանօթ առած՝ շարժեցաւ Դաճուվայէն Ատենի ծոցին վրայ, դէպ'ի հարաւային եթովպիա, և մտաւ կալլաներուն երկիրը: Բայց այն երկու արշաւանքն ալ անբաղդ եղան: Ավենարուպ զարնուելով եթովպացիներէն Ագբլայի մօտ դաւաճանու թեամբ յաղթուեցաւ ու մեռաւ: Իրեն հետ ընկաւ նաև նշանաւոր հայկողուն մը, Առաքէլ Պէյ Ապրոյ, Մասովայի քաղաքապետ, որ վսեմափայլ նուպար փաշային հօրաքեռորդին էր, տաղանդաւոր և ազնիւ երիտասարդ: Ինչպէս նաև զոհ եղաւ եթովպացւոց կատաղութեանը՝ Կոստանդնուպօլսի աւստրոհունգարական դեսպան Ջիչի կոմսին որդին կամ եղբորորդին՝ Ջիչի կոմս աբիսիրտ երիտասարդը: Եթովպացիք 'ի սկզբան երկիւղ ձևացունելով՝ ետ ետ քաշուեր են. եգիպտական զօրքն ալ աւելի ևս վստահութեամբ անոնց ետէն ընկնալով երբոր ելէջաւոր տեղ մը հասեր են, հօն դարանալով եթովպացիք չորս կողմէն: Վրանին յարձրկելով՝ գաղանաքար զամենն ալ ջարդեր են: Եթովպացւոց այս հրոսակներուն՝ քաջրան անունով անգղիացի զինուորական մը հրամանատար է եղեր իսկ Մունցինկէր հասնելով Ասալ լիճն ու առ երես սիրայիր ընդունելութիւն գտնելով տեղացի ընկի կալլաներէն,

գիշերանց յանկարծ պաշարուեցաւ վրանին մէջ, 15 նոյեմբերի 1875, ու մահացաւ վիրաւորուեցաւ: Կինն որ երբէք չէր զատուեր իրմէն՝ քովն սպաննուեցաւ, հետն ալ իրեն հոյրենակիցն ու բարեկամը Ռակէնմախէր (Raggenmacher) անունով: Եգիպտացիք յաղթուած ետ քաշուեցան մեծամեծ կորուստներով, հետերնին առած իրենց զորավարը՝ մահացաւ վիրաւորուած, որ յառաջ քան մոռնելն եգիպտական հոյր՝ մեռաւ ճամբուն վրայ: Բայց նոյն իսկ այն վերջին վայրկեաններն ալ միակ մտածմունքն ու խօսքն իր քովին ներուն՝ այն էր որ նոյն երկրին աշխարհացոյցն հանեն:

Յիրաւի եզակի անձանց մէկն եղաւ Մունցինկէր, և արդիւնաւոր՝ քաղաքական յառաջադիմութեան. այն աբիսիրտ մշակաց մէկն, զորոնք մեր դարը կը դրկէ աշխարհքիս անմարդաբնակ կողմերը պատրաստել, ուր քիչ ժամանակէն քաղաքակրթութիւնը պիտի երթայ հաստատապէս հանգչելու: Վերջապէս անոնցմէ մէկն եղաւ, որոնք իրենց անհամբեր բարոյքը՝ նոյն իսկ ներառուութեամբ, կը լրացունեն ուրիշ այնչափ այլոց անգործութիւնը, և արդեամբ կը քարոզեն թէ իրացընէ աշխարհս առաջ կը քայլէ:

ՄԵԾԱՆՈՒՆ ՎԱՅԺԱՆԵԱԼԻ Ի 1876 ՍՄԻՆ

ԱՊՐԵՏ ՀՈՒՄՍ, անգղիացի երևելի երգարար, և մարտի, մեռաւ 'ի Բարիք 'ի հասակի 39 ամաց, սրտի հիւանդութեամբ: Բազմաթիւ նուագներէ, երգերէ, մեղեդիներէ, և այլն, զատ ունի մէկ մեծ եղերերգութիւն մը (Opéra), հինգ արարուածով, Ines de Castro, որ իր գործոց գլուխ կը համարուի:

ՅՈՒՍԵՓ ՍԻՆԻՍԻՆԻ, գերմանացի հնախոյ, որ 3 մարտի կ'այցեւէր Ամաթոնտի հռչակաւոր հին զամբաններուն, Լառնա-

գայի մօտ, Կիպրոս կղզւոյն մէջ. յանկարծ աւերակներէն քար մը գլխուն ընկաւ ըսպաննեց զինքը: Գիտութեան այս զոհը 23 տարեկան էր, և Լիբսիա ծնած էր:

ՀԵՐՈՒՍՏՈ ՊԵԱՐ, գաղղիացի անուանի քիմիագետ, որ 1826 թուականին գտաւ պարզ մարմինն պրոմ, որ յունարէն գարշահոտ ըսել է:

ԱՋԵՍՏԱՆԻ ՍՏԻՈՒՐԻ (Stewart) Սմերիկոյ, գուցէ բոլոր աշխարհիս ամենէն մեծ ձուռարուեստաւորը (Industrial), մեռաւ 10